

ՆՈՐՇԷՆԻ ՓՈՔՐԻԿ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ

Հ. Վահան Վրդ. Յովհաննէսեան ծնած էր Ախլցիխայի Ծխալթփի-
լա (Նորչէն) գիւղը, 1894ի Սեպտեմբեր 1ին: Հայրը՝ Պօղոս (գեր-
դաստանի հին ազգանունով՝ Եօրոյեան), մայրը՝ Սրբունհի՝ (ծն. Կա-
րապետեան), 1830ին Կարինէն Ախլցիսա գաղթած սերունդէն, երջա-
նիկ քոյն մը կազմած էին՝ 1890ական թուականներուն, բարեկեցիկ
պայմաններով եւ կրօնական բարեպաշտ աւանդութիւններով սնած
միջնորդրոյի մը մէջ: Մտահոգ իրենց անդրանիկ զաւակին՝ Թոմասի
հայեցի կրթութեամբ, զայն կը յանձնէին ծխատէր քահանային խը-
նամքներուն. դառն օրեր ապրած էին իրենք՝ Կովկասի հայկական
դպրոցներու ռուսացման տիտուր շրջանին, 1884ի ատենները, եւ ան-
պատճառ կ'ուղէին որ իրենց զաւակները տիրապետէին մայրենի լեզ-
ուին: Գիւղացիները՝ Թունդ հայրենասէր, ռուսերու խաչ հանելչ
խակ՝ հեղնանքով՝ ծուռ կը նկատէին, ինչպէս պիտի պատմէր, տա-
րիներ վերջ, ինք՝ Թոմասիկ, ձեւացնելով քարոզն ու նոյնիսկ ձայնը՝
գիւղին պատկառելի Տէր-Հօր, որմէ անջնջելի յիշատակներ պա-
հած էր:

Նորչէնի ձկնական դպրոցին մէջ՝ ուշիմ պատանին շուտով կը սերտէր Մեսրոպեան աթուրները, կը քաղէր սաղմոս ու շարական, ժամը չապիկ կը հագուէր յաճախ, գրակալին վրայ արծուօրէն թառած հակայ Գայամաուրքին գաղտնիքները կը սիրէր քսել: Հայրիկին պարծանքն էր վառվռուն թոմասիկը, որ իր սրամիտ ու անհատնում չարածնի հարցումներով՝ երբեմն վարանքի նոյնիակ կը մատնէր գիւղին բարեմիտ քահանան. եւ անիկա, անգամ մը անհամբեր, խոչոր ու հատտ ճաշոցով հարուած Բը կու տար փոքրիկին գլխուն:

1908ի Սեպտեմբեր 13ին Թոմասիկ կը մտնէր Ս. Ղազար. իրեն հետ, Պաթոմէն, նոյն շողենաւով ճամբայ կ'երկէին երկու ուրիշ պատանիներ հետ. մէկը՝ Վրեննայի վանքին համար (Հ. Պետրոս Տէր-Պօղոսեան), միւսը՝ Հոռոմի Լեւոնեան Վարժարանին համար (Տ. Պետրոս Վրդ. Այաճաճեան) :

Թոմասիկ Նորչէնէն Ս. Ղազար կը բերէր հայ լեռնականի ջինջ հարստութիւնը՝ մաքուր ու վեհամօն աիրաւ մը, կրօնապէս բարեպաշտ ու երկկողած, միանգամայն քանադատեղծ հոգի մը՝ հայրենիքի բնութեան դեղեցկութիւններով մեծցած, հայրենի կրակարանին ջերմութեամբ դիւթուած, հայկական դիւղին ոսկի հէքեաթներով հարուստ, մեր անոյշ հողին արեւահամ բառը ծծած եւ անոր նահապետական աւանդութիւններուն կուսական ամբողջեամբ օծուել:

Նորչէնի իրերիկ քանատները պիտի աճէր հասակով եւ իմաստութեամբ, Արքիեպիսկոսի Գեղաժիծադ ափունքին, պարարտ հողի մէջ, յառ յորակերով չորչորուն:

Հ. ՎԱՀԱՆ ՎՐԴ. ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

(1894 – 1977)

1977 ՆՈՅԵՄԲԵՐ 10

Ալեքսանային երեկոյեան տխուր մշուշին հետ՝ յանկարծական սուգն իջաւ պատեւ Ս. Ղաղարու Հայոց վանքը: Մարեցաւ առկայծ մրադը, նուաղեցաւ ուրախ ժպիտը բանաստեղծին, աստեցաւ կենսալիւր պինարկը ամէնուա սիրելի Հ. Վահան Վրդ. Յովհաննէսեանի: Աստուծոյ եւ Հայրենիքին երազանքով եւ անխառն կարօտով՝ մեր ձեռքերուն մէջ դադրեցաւ յանկարծ բարախելէ ադդ աղնիւ սիրտը, որ դեռ քանի մը ժամ առաջ՝ յորդադեզ աւելնով կ'ոգեւորէր հոգեկիցներս բոլոր: Կարճատեւ ու հանդարտ, եւ՝ ըստ բժիշկներու վկայութեան՝ անցաւ հոգեւլարքէ մը ետք, ցուրտէն բորբոքած թոքային յեղակալած արիւնահոսման հետեւանքով, յուշիկ ննջեց վաստակաւոր վանականը, գօրացած՝ Ս. Եկեղեցւոյ Խորհուրդներով, յետին ակնարկը ուղղելով Աստուածամօր մեծ նկարին, եւ ամոր մօտիկը կախուած փոքրիկ պատկերի մը՝ որ կը ներկայացնէր իր պաշտելի ծնընդավայրը, հայրենի գիւղակը Նորչինի: Աստուածավախ վանականին ու հայրենասէր բանաստեղծին հրաժեշտի յետին ողջոյնն էր՝ այս անցաւոր աշխարհին:

Մոմ մը վառեցինք հանդուցեալին սնարին, Սեւանի սուրբ խոյանին սրբատաշ քարերուն համբոյրով օծուն. աղօթք մը մրմնջեցինք անոր անշնչացեալ մարմնին վրայ՝ արտասուախառն հեծկրտանքով, ու Նարեկացիի լուսապայծառ հրեշտակին յանձնեցինք մեր հողեկից Վարդապետին ջինջ հողին: Հնչեց իրիկուան տխուր զանգը՝ վանքի զանգակատունէն, բօթը ծաւալեցաւ անենակէ անենակ, Աբբահայրն յուզումով հասարակաց հաղորդեց. ընթրիքի պահուն՝ յեղակարծ մեկնումը Հ. Վահան Վրդ.ի այս երկրէն, երկնքի արքայութեան վառ յոյսերով: Մեր հինաւորաց շարականներու թափօրով, Շնորհալիի ողբերգով, հայրենիքէն բերուած ափ մը օրհնեալ հող ցանեցինք՝ մեր արցունքներուն հետ՝ դադաղին սլրայ Հ. Վահան Վրդ. Յովհաննէսեանի, որ գնաց հանգչիլ խաղաղիկ՝ հողինբերու հանդերձուանին մէջ, երազներու կղզիին աղօթաւոր նոճիներուն շուքին տակ հակելու, լուսաշող յարութեան յոյսով, Ալիշանի հաւատքով:

բողջ մերձակայ անտառներէն փայտ կը հայթայթեն, կը աղոցեն, կը տաշեն, ու երեք ամսուան ընթացքին կը կանգնի մեծկակ եկեղեցին: Բացման իրիկունը՝ բազմաձայն չքեղ պատարագ մը երգած է զինուորներէն բաղկացած երկու հարիւր հոգինոց Երզնաստամբը, նուազախումբի ընկերակցութեամբ. դեկավարը՝ Մանսթրօ Սաւինի, ամբողջ յիշողաբար ձայնադրած էր թուր մասերը Պախի ալդ դուլս գործոցին: Հ. Վահան յուզումով պատարագած է ալդ գիշեր, քարոզած է եւ հաղորդած հազարաւոր զինուորներ: Մըրիկէն վերջ՝ խաղաղութեան աղանին եկած է Թաուր գերեզաշտի երկինքին վրայ:

Հ. Վահան Վրդ. կը պատմէր թէ խթումի կէսօրէն մինչեւ կէս գիշեր խոստովանարան նստած է եւ անդադար խոստովանացած է բոլորը. կ'աւելցնէր թէ կէս գիշերին՝ երբ խոստովանարանէն դուրս ելած է, գրեթէ ալ անկարող էր աջ ձեռքը բարձրացնելու. ա'յնքան յոգնած էր արձակում բաշխելէն:

Գերեկից զինուորներէն մէկը խորհրդաւոր իւղանկարով մը ուղած էր անմահացնել Լոնտիանիի ալդ եկեղեցին, փշթելերու մէջ ատեղծուած սակաւ ներկերուն թոյլատրած չափով, մութ կապոյտ գոյնի նրբերանգներով: Հ. Վահան Վրդ. ի սենեակի զարդերէն մէկն էր ալդ նկարը: Ու միշտ հարց կու տար ինք իրեն յուզումով՝ թէ արդեօք հիմա, երեսուն տարի վերջ ալդ օրերէն, ինչ եղած էր ալդ եկեղեցին: Այլմէր թէ անդիւսցիւններն անգամ հիացած մնացեր են իտալացիներուն հանճարեղ եւ արագ կազմակերպութեան վրայ, եւ անձամբ եկած են մասնակցելու բացման արարողութեան:

Ծնունդի ալդ գիշերը, պատարագի ժամանակ՝ Հ. Վահան զինուորներուն բացատրեր է խաղաղութեան մեծ խորհուրդը եւ քրիստոնէական եղբայրութեան ոգին՝ հայ երգին թրթռացումներով. «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ, խաղաղութեան ձայն հնչեցաւ, թշնամութիւնն հեռացաւ, աէր ընդ հանուրս սփռեցաւ...»: Արցունքի եւ յուզումի մէջ ողջագուրուած են ալդ գիշեր ամէնքը, սպաններ ու զինուորներ:

Լոնտիանիի ալդ եկեղեցին՝ հաւատքի կոթող մըն է եղած, յաղթանակ՝ տառապանքի աջխարհին վրայ, եւ որ չարչարուած հոգիներու վերեւ սփռած է խաղաղ հովանի մը, լոյս՝ մութին մէջ:

ԼՈՆՏԻԱՆԻԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐԸ

Երկար կը մնայ Հ. Վահան Վրդ. Լոնտիանիի գերեզաշտին մէջ, 1944ի աշունէն մինչեւ 1946ի ամառը. հոն համեմատաբար աւելի խաղաղ մթնոլորտ մը տիրած է, ամբողջապէս «ոչ-գործակից» զինուորականներէ բաղկացած ըլլալով:

Հայ Վարդապետին շուրջ շուտով կը խմբուին հոյլ մը մտաւո-

րական սպաններ, զրազէտ-քանաստեղծներ, երաժիշտներ, նկարիչներ, բժիշկներ, ճարտարապետներ. դեղարուեստական երեկոյթներ կը կազմակերպուին գերեզաշտին մէջ, ու մանաւանդ գրական ասուլիսներու հաւաքոյթներ: Հայ մշակոյթի, գրականութեան ու պատմութեան մասին ատէպ կը խօսի Հ. Վահան: Այդ ատեղծագործէ անդադար: Այդ օրերուն կը գրէ բազմաթիւ քերթուածներ, ներշնչուած մարդկային տառապանքէն, զգացուած մանաւանդ իր պանդուխտի դժխեմ կեանքէն, յաճախ երազելով հայրենիքն ու հայրենի գիւղը:

Գրազէտ սպայ մը՝ Ֆ. Պաղիւնի, Հ. Վահանի քերթուածներէն շատերուն կու տայ խտալերէն գեղեցիկ հանդերձ ու կը պատրաստէ ընտիր հատորիկ մը, ամէնէն յատկանշական ոտանաւորներէն ծաղկաքաղ մը շինելով. երաժշտազէտ Սաւինի՝ արտագրաւ դաշնաւորումով կ'եղանակաւորէ շարք մը քերթուածներ. արուեստագէտ զինուորի մը յօրինած գեղեցիկ իւղանկարին դիմաց՝ Հ. Վահան յուզումով կը ատեղծէ սիրուն քերթուած մը, խորագիր դնելով «Կապոյտ աչքերով» փոքրիկ Տիրամայր»:

Այսպէս Լոնտիանիի գերեզաշտին վրայ կը բացուէր, տառապանքէն վեր, լուսաւոր երկինք մը, աղօթքի եւ արուեստի բուրվառով խնկաւէտ, հոգիներու եղբայրութեան եւ խաղաղութեան տենչով առջուն:

Յատկապէս այս գերեզաշտի ընկերներն էին որ շատ սրտազին կապեր պահած էին Հ. Վահան Վրդ. ի հետ, եւ իր մահէն ետք՝ փափաք յայտնեցին առանձին մահարձան դամբարանով մը պատուելու իրենց սիրելի եւ անմոռանալի Վարդապետին յիշատակը, Ս. Ղազարու գերեզմանատան մէջ:

ԱՌԱՔԵԱԼԻՆ ՎԵՐԱԴԱՐՁԸ

Եւ ահա կը ծագի փրկութեան ալդը. 1945ի ամառը վերջ կը գլուխէ պատերազմը, եւ կը սկսի գերեզարձը դէպի հայրենիք: Հ. Վահան Վրդ. անգամ մը եւս հերոսաբար կը սպասէ, Խաղաղ վերադարձող ամենավերջին զինուորներուն ալ մատուցանելու իր հայրական ժըպիտն ու ծառայութիւնը: Եւ հոսակ ինքն ալ կ'ուղղուի դէպի տուն:

3. Ափրիկեան գերեզաշտերու մէջ՝ Հ. Վահան Վրդ. ի կատարած վեհանձն առաքելութեան մասին մեծ գնահատանքով կը խօսին հետեւեալները.

FRANCO G. PICCINNI, Poesie (di P. Vahan Hovhannessian) tradotte dall'autore e rese in versi sciolti italiani da FILIPPO BASLINI Venezia - S. Lazzaro 1947), Presentazione, pp. 5-14; FRANCO G. PICCINNI, Africa senza sole, Tosi, 1949, pg. 161-162, 179-180; ALFIO BERRETTA, Tragedia a Burguret, Milano (Casa Ed. Ceschina), 1966, pp. 52, 103, 109, 140, 180, 206, 282, 285, 318, 329, 351, 396, 407, 412, 418, 422.

Գերեզաշտերէն, միջազգային կարմիր խաչի միջոցով, շատ ցանցառորէն, իրմէ քանի մը հակիրճ նամակներ տալով՝ էինք միասին. ուրիշ ոչինչ. ու կը սպասէինք անհամբեր, տարիէ մը ի վեր:

1947 Յունուար 1. Երեկոյեան ընթրիքի պահուն՝ յանկարծ կը հնչէ Հռոմի մեր վանատան դրան դանդը. կը յիշեմ աշօրուան պէս. մենք երեք ամսուան նորընծայ արեղաներ էինք, երեք ընկերներով, ու կը պատրաստուէինք աստուածաբանութեան վերջին տարուան եզրափակիչ քննութիւններուն. վարդապետներէն մէկը կ'երթայ նախելու թէ ի՞նչ կայ, ո՛վ է այս տարօրինակ ժամուն եկող հիւրը...: «Հ. Վահանն է... Հ. Վահան վերադարձած է...» կը լսուի ուրախ կանչը. իսկոյն կ'ընդհատի ընթրիքը, եւ ահա եղբայրական ողջագոլորումներ, կարօտի արցունքներով: Մեր դիմաց կը դառնան կոլովի զինուորական մը, խաւարական ապայի համազգեստով, մատրանապետի խոշոր խաչը կուրծքին: Նոյն կլոր ու պատկառելի գլուխը, արեւակէզ դէմքով, մազերը թեթեւօրէն ալեխառն:

Ընթրիքը հանդէսի փոխուեցաւ: Մենք իրմով, ինք մեզմով, վանքի կեանքով ու նորութիւններով, մենք իր Ափրիկեան աշխարհով, փոխադարձաբար կը հետաքրքրուէինք պահ մը:

Յաջորդ իրիկունը, բարի դարուստի փոքրիկ ու ընտանեկան հանդէս մըն ալ սարքեցինք, երգերով ու քերթուածներով. փակման պահուն՝ յուզուած խօսք առաւ ինք, վաստակաշատ առաքեալը, Ս. Ղազարու վանքը նմանցնելով այն փրկարար աստղին, որուն պայծառ լոյսով ողբերգութիւններէն ինքզինք՝ իր ամենատխուր օրերուն, միշտ վառ պահելով՝ օտարութեան մէջ՝ պայծառ տեսիլքը հեռաւոր հայրենիքին, փառաւոր հայրենիքին:

Քիչ օրեր ետք՝ թուաւ դէպի Վենետիկ – Ս. Ղազար. նոր հանդէսներ. հո՛ն ալ ուրախութիւն եւ կարօտաբաղձ յուզումներ:

Եւ ահա դարձեալ կը սկսի Հ. Վահան Վրդ.ի զինուորական կեանքը. բայց այս անգամ՝ իր տունին մէջ, Մխիթար Աթոռօր նուիրական դամբանին մօտիկ. դարձեալ նուիրում, դարձեալ զոհաբերում, ի սպաս հայ ժողովուրդի հոգեւոր ու մշակութային լուսաւորութեան, ինչպէս առաջ:

ՄԽԻԹԱՐԵԱՆ ԸՆՏԱՆԻՔԻ ԾՈՑԻՆ ՄԷՁ

Տառապանքի ու վշտի փշթելներէն ասդին՝ ահա կը բացուի խաղաղութեան վարադոյրը, ու Հ. Վահան Վրդ. քիւր զոհողութիւններու շուրջառով զգեստաւորուած, դարձեալ կը բարձրանայ խորան, նորոգելու իր ուխտը ցնծադին, հոն՝ ուր իր առաջին պատարագն էր մատուցած, քսանեւհինգ տարիներ առաջ, Մխիթար Աթոռօր խնկելի շիրմին մօտիկ:

Միաբանութիւնն ալ շուտով անոր վեհանձն ուսերուն կը յանձնէ կարեւոր պատասխանատուութիւններ. ու նախ՝ Մխիթարեան տպարանի վարչութիւնը, որ կենսական պաշտօն մըն է՝ Ս. Ղազարու դրական առաքելութեան դարբնոցին մէջ: Ծուրջ մէկ ու կէս տարի, ձեռնհաս հոգածութեամբ, Հ. Վահան ամէն ջանք կը թափէ՝ այժմեական թարմ շունչով օժտելու իր նոր առաքելավայրը:

1947ի Հոկտեմբերին կը հիմնէ «Մխիթարեան Ընտանիք» ամսաթերթը, ամուր օղակով զօդելու համար բաղմամբիւ սրտեր, որոնք Մխիթարի կանթեղին լոյսով ջերմացած, Ալիշանի հոգիով մեծցած, սփռուած էին օտար ափերու վրայ. օղակ մը՝ որ երկար տարիներ՝ ծիածանի դոյներով պիտի փռուէր Մխիթարեան Վարժարաններու երկինքն ի վեր, Վենետիկէն Փարիզ, Հալէպէն Աղեքսանդրիա ու մինչեւ Պուէնոս Այրէս: Ատով՝ Հ. Վահան Վրդ. կ'ունենար իր յատուկ բեմն ալ, ուրիշ պիտի տար դեղեցիկ դասեր, հայրենասիրական ներբեմն ալ, ուրիշ պիտի տար դեղեցիկ դասեր, հայրենասիրական ներբեմն ալ, ուրիշ պիտի տար օժութեամբ զեղուն. եւ ահա՝ շնչումներով բորբոքուն, կրօնաշունչ օժութեամբ զեղուն. եւ ահա՝ շարքը ոսկի հէքեաթներու, յուզիչ պատմութեանքներու, որոնք կը բերը խէին իր բեղուն երեւակայութենէն, խանդավառելով ժողովրդին սրտերը, շատերէն խլելով նոյնիսկ յուզումի արցունքներ:

Այդ շրջանին՝ Հ. Վահան մեծ թափով կ'աշխատակցի «Բազմավէպ»ին, բաղմամբիւ քերթուածներով ու գրախօսականներով. 1947ի եւ 1949ի «Գեղունիք»ներուն մէջ ներկայ է արտադրաւ գրութիւններով. կը կատարէ երկու թարգմանութիւններ ալ՝ օգտաշատ ու կրթիչ գրքերու. «Պատմական հոգի մը» եւ «Սրբակեաց մանուկներ»:

ԱՆԱՊԱՏԻ ԱԻԱԶԷՆ ԾՆԱԾ ՀԱՏՈՐՆԵՐ

Poesie – խեղճ մարդկութիւն – Հայկական գիւղը. ահա՛ անապատի աւազէն ծնած քերթուածներու երեք ընտիր հատորներ, որոնք լոյս կը տեսնեն 1947-48ի շրջանին:

Առաջինը, խաւերէն սքանչելի թարգմանութեամբ՝ ընդարձակ ժողովածոյ մըն է Հ. Վահանի քնարէն, քաղուած մեծ մասով տակաւին անտիպ տետրակներէ, որոնք Քենիայի գերեզաշտերուն բոյրն ունին, ուր քերթողը միշտ անոյշ խօսք ունի եւ խորունկ խոհեր՝ ուղղուած իր անձին կամ տառապող իր ընկերոջ: ունի մրմունջներ ուղղուած Սատուծոյ՝ արտերու համար, աստղերու համար, աղօթքի, ուղղուած Աստուծոյ՝ արտերու համար, արտում հոգիներու համար. ունի սիրատարի բարի աչքերու համար, տրտում հոգիներու համար. ունի սիրատարի փարում բնութեան, հայկական հողին ու մանաւանդ՝ իր պաշտելի գիւղին: Թարգմանիչն է խաւացի գրագէտ ու գերեկից ապայ մը՝ F. Baslini:

Երկրորդը, 163 քերթուածներով, նոյնպէս յիշեալ տխուր պայմաններուն մէջ գրի առնուած, խոշոր պատուհան մը կը բանայ՝ սրը-

ՎԱՆԱՏՈՒՐԻ ԵՐԳԵՐԸ

Աստուած, բնութիւն, հայրենիք, մարդս, հողին, վանքը, Աստուածամայրը. ահա՛ Հ. Վահանի դիւթական քնարին եօթը լարերը, ահա՛ անոր հէքեաթային ծիածանին եօթը գոյները, որոնց ներդաշնակ համադրանքէն ծնունդը կ'առնեն Վանաստուրեան երգերը, հազարէն աւելի:

Ընդհանրապէս սակաւ տողերով, յաճախ դրական նուազի մը ամփոփ հնչիւններով կը յաջողի վարպետօրէն ու յատակօրէն ներկայացնել իր դադափարը, գեղեցիկ պատկերներու հանդերձանքով եւ գդալնոտ յուզականութեամբ. վախ չունի յանդեր փնտռելէ. չի ախրեր տարտղնիլ՝ երկարապատում դարձուածքներու բովին մէջ. իր գորովն ու լացը՝ հաղորդական քան մը ունին, որ կը համակեն ընթերցողին էութիւնը. տաքուկ երեւակայութեամբ ալ միշտ օծուն է իր երգը:

Իր մէջ խառնուրդ մը կայ Ալիշանէն, Վարուժանէն ու Մեծարենցէն, նոյնիսկ՝ Տէրեանէն եւ Խաչակեանէն. իր ամէնէն սիրած հեղինակներն էին անոնք:

Հայրենասէր վանական մըն էր Հ. Վահան, հայրենասէր դաստիարակ ու հայրենասէր բանաստեղծ, որ կրօնքի եւ հայրենիքի զոյգ շեփորներով տենչաց երգել, կրօնքի եւ հայրենիքի զոյգ թեւերով ուսուցող թռչիլ ու ախրել, ու մանաւանդ ախրցնել ինչ որ քարի է ու դեղեցիկ, ուրախութեան եւ սփոփանքի բեհեզ ամպ մը սփռելով նժդեհ ու տառապող հոգիներու վրայ:

Պատմութեան մէջ աւելի չարժուածքին հետամուտ է՝ քան զգացումներու եւ տեսարաններու նկարագրութեան, որոնք ընթերցողն ինք պիտի երեւակայէ յաճախ, հեղինակին հոգիէն բոց մը ժառանգելով անգլալարար:

Երկարաչունը քերթուած մը ունի «Խեղմ մարդկութիւն» հատորի աւարտին, թերեւս երկարագոյնը՝ իր բոլոր երգերուն, ուր Հ. Վահան նրբօրէն ու պատկերալից տողերով, ինչպէս միշտ, կը բնութագրէ ինքզինք, «Իմ երգերս» խորագրին տակ.

Ես լոյսին հետ երգեցի — հովուի ազատ սրբիմացով,
Եւ իմ յանգիստ հիւսեցի — արեգակին շողերով:

Աշխարհս էր իմ անդաստան — ես՝ մոր մը շակ սրտերու,
մշտաբաց սէրս օթեւան — որք եւ ազատ ժողովելու:

Անտառներու մըքութիւն — ես փոխեցի խորհուրդի,
Եւ սոյն առի սիւքերուն — իմ տաղերուս մեղեդի:

Անձրեւներուն հետ լացի — անհիմներուն մէջ քախծոտ,
մոր հաւատով խնդրեցի — շիրիմներուն առաւօտ:

Թանձր ըստուերներ երբ իջան — աղբիւրներու երեսին,
Ես քրմապետ տրամութեան — լոյս վառեցի իմ հոգին:

Ու տունէ տուն անցնելով — բարութիւնս հաց բաժնեցի, ...
Երանեցի խոնարհ սէր — հիւզակներուն ազատին:

Ազաչեցի աստղերուն — ըլլայ գիշերն ալ բարի,
որ հեշտ մնջէ մարդկութիւն — սրտին՝ լըրումըն լուսնի:

Ու կը յորդին, կը բազմապատկուին պատկերները լուսեղէն, Նարեկեան երգերու պէս ծաւալուն, ինչպէս սաղմոս մը ինքնախոստովանութեան, բանաստեղծի սրտին բուրբալով հրայրեաց, որ ամբողջ կը սպառի բարիք ու անէր սփռելով համայն մարդկութեան.

Լոյս է հոգին երգերուս — մոր աշխարհի արեգակ,
գարնամարեր արշալոյս — վըրան երկինք կապուտակ:

Սէր է հոգին երգերուս — բոցերու պէս երկարող,
մերֆեւը խունկ եւ զըմուռ — սրտերուն մէջ տառապող:

Յոյս է հոգին երգերուս — փառանքերու պէս բարի,
պանդուխտներուն խըրախոյս — եւ հիւրանոց հանգստի:

Բոց է հոգին երգերուս — երկինք տանող հրեշտակ,
ըզգաստութեան մերմակ կոյս — վանքերու մէջ ամբաստան:

Ծուխ է հոգին երգերուս — երդիքներէն հայրենի,
Նաւասարդեան զըւարթ լոյս — սերունդներուն ապառնի:

Ունի երգեր տասնեակներով, հարիւրներով, հազարով, որոնք ինչպէս արեւելեան շքեղ մողայիք՝ կը զարդարեն խորաններն իր հողին, կամ ինչպէս աղօթք մեղրածոր՝ անոյճ բարբառ մ'ունին մը խիթարութեան ու քաջալերանքի, ոսկեթոյր շող մ'ունին՝ ցաւերու բուժիչ, հիւանդութիւններու փարատիչ:

Իմ երգերս են յորդ աղբիւր — աւագանէ աւագան,
շուրջը շուշան ասկեթոյր — իրքեւ գօտի մաքրութեան.

Ոմանք խորհուրդ հաւատի — ժամին վըրայ լուսածիր,
գանգակներուն կիրակի — եւ յարութիւն լուսալիր.

Տառապակոծ աշխարհի — Պրոքսատիկէ աւագան,
ուր կ'իջնէ շուքն Յիսուսի — գերդ ծիրանի սրբութեան.

Խորաններուն եմ դիպակ — ռտփերուն տակը Խաչին,
եւ արցունքի վարշամակ — մեղաւորի գոջումին: ...

Սէր կը ծորի Հ. Վահանի քերթուածներէն, սէր համայնական,
սէր սրբազան, կարեկցութեան եւ եղբայրութեան նեկտարով առլը-
ցուն, Քրիստոսի խաչին հրաշք զօրութեամբ լուսափողփող: Հարկաւ
Ափրիկեան գերեղաշտերու դժխեմ տարիները մեծապէս կոփած են
բանաստեղծին ներաշխարհը, որ արդէն զգայուն դէպի ցաւն ու վիշ-
տը՝ իր համապարփակ սիրով ուղեց գրկել ու գգուել ամէնքը:

Ոմանք հանդարտ անձրեւ են — գորնանային մանանայ
կապոյտ երկնի դէմ հիւսկէն — ֆոյ կը քըլին մարգարտեայ.

Ուրիշներ են անապատ — աւագներու արշաւով,
կիզիչ արեւ փռշտապատ — բարկ եւ անամպ երկինքով.

Սիրտը մարդուն սիրավառ — ես անապատ կռչեցի,
եւ կ'ուզէի որ ըլլար — երգս յաւաքի աշխարհի: ...

Ուրիշներ են շիրմաքար — սեւ ու տրտում Խաչին տակ,
երկինք՝ ձեռնուն վշտահար — նոնին՝ անլոյս աշտանակ:

Եւ բաղեղներ հիւսեցի — մեռելներու սուրբ պատանք,
սիրտըս բուրվառ՝ խունկով լի — յոյսին համար պաղատանք:

Որ երբ լալով գան մայրեր — այնտեղ բոցիկ մը գտնեն,
մէջը սեւ բիծ, շուրջը՝ սէր — Այս մեր Նաբեկն է, ըսեն:

Նաւասարդեան զուարթ լոյսի եւ Նարեկեան աղօթքներու մըջ-
տական կնիքն ունին Հ. Վահանի երգերը, կարծէք՝ միտքարանքին
ալ հայկականութիւնը փնտռելով, եւ համայնական սէրն ալ մկրտե-
լով Սեւանի երկնամերձ աւագանին մէջ:

Ահա՛ Հ. Վահանի երգերը. ահա՛ նաեւ իր անմահութիւնը:

Հ. ՆԵՐՍԷՍ ՏԵՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆ

ՏԱՊԱՆԱԳԻՐ

Հ. ՎԱՀԱՆ ՎՐԴ. ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆԻ



ՎԱՐԴԱՊԵՏ ՀՈԳԵԼԻԾ
ՆՈՒՐԵԱԼ ԱՍՏՈՒԾՈՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ
ԵՒ ԻՐ ԱԶԳԻՆ ՍԻՐԵԼԻ
ԱՆԲԱՍԻՐ ԵՌԱՆԴՈՒՆ ԱՌԱՔԵԱԼ
ԲԱՆԱՍՏԵՂԾ ՀՈԳԵՇՈՒՆՉ
ՆԵՐՀՈՒՆ ԴԱՍՏԻԱՐԱԿ ԵՒ ՈՒՍՈՒՑԻՉ ԽԱՆԴԱՎԱՌ
ՈՐ ՍԵՒԱՆԷՆ ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐ
ԱՊՐԵՑԱԻ ՀԱՅՐԵՆԻ ԱՐԵՒԻՆ ՏԱԿ ՊԱՅԾԱՌ
ԱՆՍԱՀՄԱՆ ՍԻՐՈՎ ԿԱՐՕՏՈՎ
ՈՒ ՏԱՐՓԱԳԻՆ ՆՈՒԱԳԵՑ ՎԱՆԱՏՈՒՐԻ ԲԱԳԻՆԷՆ
ԶԵՐԴ ՀԱՅՐԵՆԻ ԿՐԱԿԱՐԱՆԻՆ ՔՐՄԱՊԵՏ
ՄԵԽԹԱՐԵԱՆ ԸՆՏԱՆԻՔԻ ՏԵՍԻԼՔՈՎ
ՍՐՏԵՐՈՒ ԵՐԳՆ ՈՒ ԾԱՂԻԿՆԵՐԸ ՎԱՆՔԻՆ
ՈՍԿԻ ՀԷՔԵԱԹՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՒՂԱԿԻՆ
ԱՐԵՒԱՀԱՄ ԲՈՅՐՆ ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԻՆ
ՈՒ ՆԵՐՇՆՉԵՑ ԿԵԱՆՔ ԱԻԻՆ
ՀԱՅՐԵՆԻՔԻ ԶԱԽԱԿՆԵՐՈՒՆ
ԿԻԼԻԿԵԱՆ ԵՐԳԵՐՈՒ ԾԵՓՈՐՆԵՐՈՎ ՅԱՂԹԱԿԱՆ
ԽՆԿԱԲՈՅՐ ՆԱՐԵԿԱՇՈՒՆՉ ԲՈՒՐՎԱՌՈՎ
ՄԱՇՏՈՑԱԿԱՆ ԹԱՓՕՐՈՎ
ՄԱՐԵՄԱԿԱՆ ԶԱՆԳԵՐՈՒ ՊԷՍ ԴԱՇՆԱԻՈՐ
ՈՒ ՔԱԶՈՒԹԵԱՄԲ ՊԱՏԳԱՄԱՐԵՐ ՀՐԵՇՏԱԿԻ
ԵՐԿՆԱԾՈՐԱՆ ԲԱԼԱՍԱՆՈՎ ՍՐԱԼՈՅՍ
ԱՄՈՔԵՑ ՎԻՇՏՆ ՈՒ ՏԱՌԱՊԱՆՔՆ ԱՀԱԻՈՐ
ԱՓՐԻԿԵԱՆ ԱԻԱԶԻՆ ՎՐԱՅ ՀՐԱՏՈՉՈՐ
ՊԱՐՏՈՒԱԾ ԽԵՂՉ ՄԱՐԴԿՈՒԹԵԱՆ

ԿԸ ՀԱՆԳՉԻ ԼՈՒՌ ԹՈՒՍԱԼԻՐ
ԱՂՕԹԱԻՈՐ ՆՈՃԻՆԵՐՈՒ ՇՈՒՔԻՆ ՏԱԿ
ԱԼԻՇԱՆԻ ՀԱԻԱՏՔՈՎ
ՀՈԳԻՆԵՐՈՒ ՀԱՆԳՐՈՒԱՆԻՆ ՄԷՋ ԽԱՂԱՂ
ԵՐԱԶՆԵՐՈՒ ԿՂԶԻՆ

Հ. Ն. Տ. Ն.